

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

29.05.2019թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Գ.Մարկոսյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
- Ա.Բեջանյանը, Ա.Մխիթարյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Հ.Հակոբյանը, Հ.Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ռ.Խանզադյանը - մարզպետի օգնական

Օրակարգում`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում
/Ստորաբաժանումների ղեկավարներ/
2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին
/Ա.Ղուկասյան/
3. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին`
 - ա) Ստորաբաժանումների աշխատակիցների աշխատանքից բացակայելու բոլոր դեպքերի վերաբերյալ նախորոք տեղյակ պահել մարզպետին:
 - բ) Ստորաբաժանումների գործառույթների հետ կապված խնդիրների լուծման նպատակով տեղեկատվություն ներկայացնել ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն` համայնքների ղեկավարների հետ նախատեսված առաջիկա հանդիպմանը քննարկելու նպատակով:

Ժամկետ 1 շաբաթ:


2. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Լ.Տեր-Սիմոնյանին, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին`
Մինչև 50% հավաքագրում ունեցող համայնքների ղեկավարների հետ 1 շաբաթյա ժամկետում կազմակերպել անհրաժեշտ քննարկումներ և միջոցառումների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:
3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին`
 - ա) Մարզային և համայնքային ենթակայության որոշ ճանապարհների վերանորոգման վերաբերյալ կատարել ուսումնասիրություններ և 1 շաբաթյա ժամկետում ներկայացնել առաջարկություն:

բ) Վանաձորում իրականացվող ճանապարհների փոսային վերանորոգումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով դիմել համայնքի ղեկավարին և հնարավոր հսկողություն սահմանել կատարվող աշխատանքների որակի նկատմամբ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա.Օհանյանին՝

ա) Տրված բոլոր գրավոր կամ բանավոր հանձնարարականների կատարման վերաբերյալ պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն:

բ) անհրաժեշտ հսկողություն սահմանել ԱԳԼՃԿ-ներում կատարվող շինարարության նկատմամբ և պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ տնտեսվարող սուբյեկտների գործունեության վերաբերյալ:

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ԴՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ԴՈՒԿԱՍՅԱՆ

Արձ.Ս. Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99/